

ԱՐԱՐԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄԻՐԴՈՎԱԹ
ԱՄԱՍԻԱՅՈՒ «ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ
ՄԵԶ

Բժշկական աշխատությունների մեծագույն մասը մեզ ավանդվել է միջին դարերից, գրված է միջին հայերենով և բառապաշարային տեսակետից մեր առջև բացում է օտար, հատկապես արևելյան լեզուների ճոխ գանձարանը: Որևէ օտար լեզվի ազդեցությունը այս կամ այն լեզվի վրա բնական և անխուսափելի լեզվական երևույթ է և պայմանավորված է քաղաքական, տնտեսական ու մշակութային մի շարք գործոններով: Այս տեսակետից՝ միջին հայերենի բառապաշարում մեծ թիվ են կազմում փոխառությունները, որոնց հիմնական աղբյուրներն են արաբերենը, պարսկերենը, հունարենը, թուրքերենը, ֆրանսերենը, լատիներենը, նաև վրացերենն ու ասորերենը: Գրավոր և բանավոր ճանապարհով միջին հայերենի բառապաշար մուտք գործած անմիջական և միջնորդավորված փոխառությունների մեծ մասը արաբերեն բառեր են: Հայ-արաբական լեզվական շփումները դարավոր պատմություն ունեն: Հր.Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ հայ-արաբական հարաբերությունները բաժանում է երկու շրջանի՝ 7-րդ դարի կեսերից մինչև 10-րդ դարը (մոտ 250 տարի, արաբական տիրապետությունը բուն Հայաստանում) և 12-րդ դարից մինչև այսօր (հայ-արաբական շփումները Կիլիկիայում և Ասորիքում, որտեղ մինչև օրս էլ հայեր են ապրում և ամենօրյա հարաբերությունների մեջ են արաբների հետ)¹: Հայ-արաբական հարաբերությունների առաջին շրջանում արաբերենի ազդեցությունը հայերենի վրա գրեթե աննշան է. մինչև 11-րդ դարի հայ մատենագրության մեջ սակավաթիվ արաբերեն բառեր են հանդիպում: Ըստ Յյուրբշմանի՝ Սեբեոսը (7-րդ դար) իր պատմության մեջ ոչ մի արաբերեն բառ չի գործածել՝ բացի հատուկ անուններից և տիտղոսներից, իսկ Ղևոնդ պատմիչը (9-րդ դար) երկու բառ է գործածել՝ Կուռայք (Ղուրան կարդացողները) և Փուրկան (Ղուրան), որոնք երկուսն էլ զուտ արաբական իրականությանը հատուկ տերմիններ են²: Հր.Աճառյանը Հովհաննես Ե կաթողիկոսի (9-10-րդ դարեր) ամբողջ պատմության մեջ արաբերեն ընդամենը երեք բառ է գտել գործածված՝ սելամ ալէք, կուրան և մակուրան կուրան (չնայած Հովհաննես Ե կաթողիկոսն ինքը սերտ հարաբերությունների մեջ էր արաբ իշխանավորների հետ)³:

¹ Տե՛ս Հրայրյա Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951, էջ 171:

² Տե՛ս Յյուրիխ Յյուրբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 297:

³ Տե՛ս Հրայրյա Աճառյան, նշվ. աշխ., էջ 173:

12-րդ դարից սկսած՝ հայ-արաբական լեզվական շփումները թևակոխեցին նոր, նախորդից որակապես բուլրովին տարբեր փուլ: Դրան նպաստեց այն մեծ ցնցումը, որ առաջացրին արաբները համաշխարհային գիտության պատմության մեջ: 8-րդ դարում հունական բժշկության անկումից հետո նրան փոխարինելու եկավ արաբական բժշկությունը, որը ձևավորվեց հունական բժշկության ազդեցությամբ և ըստ էության՝ հենց հունական բժշկության բնական շարունակությունն էր համաշխարհային բժշկության պատմության մեջ: Արաբական քաղաքակրթության, գիտական մտքի և հատկապես արաբական բժշկության զարգացումը համընկավ արաբների քաղաքական հզորացման հետ, երբ աննկարագրելի կարծ ժամանակահատվածում նրանք իրենց նորաստեղծ երկրի սահմաններն ընդարձակեցին Յնգլաստամից մինչև Ատլանտյան օվկիանոս՝ մեկը մյուսի հետևից գրավելով Պարսկաստանը, Սևտիզը, Չայաստանը, Իսպանիան, ամբողջ Յուսիսային Աֆրիկան (եգիպտոսից մինչև Մարոկկո) և ստեղծելով հզոր տերություն:

Բժշկության ասպարեզում մեծ հաջողությունների հասած և բժշկության առանձին բաժիններ կատարելության հասցրած արաբ գիտնականների ազդեցությունը Չայաստանի վրա տարածվեց ավելի ուշ, քանի որ արաբների զավթողական և բարբարոսական գործողությունները, հայերի՝ իրենց քաղաքական անկախության համար մղող անընդհատ կռիվները երկար ժամանակ խանգարեցին այս երկու երկրների մշակույթների առողջ շփումներին:

Ինչպես նշում է Ս.Մուրադյանը, միջնադարում մեծ զարգացում ապրող արաբական գիտություններից հայերի համար ամենասիրելին ու մեծ հետաքրքրություն ներկայացնողը բժշկությունն էր⁴: 12-րդ դարում հայերը նախ արաբերենից թարգմանեցին «Գիրք վաստակոցը» (երկրագործության և գյուղատնտեսության մասին), ապա Ռուբինյան Սմբատ 3-րդ թագավորի հանձնարարությամբ թարգմանվեց «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» աշխատությունը, վերջապես հենց 12-րդ դարում Սխ. Դերաջին գրեց իր «Ջերմանց մխիթարութիւնը»: Դենց այս դարերից սկսած՝ հայ բժշկագիտությունը կարծես արաբականի արտացոլքը լիներ: Եվ եթե հայ-արաբական հարաբերությունների առաջին փուլում հայերենը գրեթե զերծ մնաց արաբական փոխառություններից, ապա 12-րդ դարից սկսած՝ հայերենով գրված աշխատություններում արաբական փոխառությունների թիվը հասնում է հարյուրների:

Յր.Աճառյանը արաբական փոխառությունների ցանկում նշում է 702 բառ, սակայն ավելացնում է, որ դա ամբողջական թիվը չէ, քանի որ դեռ հրատարակված չեն միջնադարյան տաղերը, բժշկարանները, պաշտոնական կամ

⁴ Տե՛ս «Ավնարկներ միջին գրական հայերենի պատմության», հատոր Ա, եր., 1972, էջ 199:

դիվանական գրությունները, որոնցով հարուստ է միջնադարյան գրականությունը⁵։ Յ. Կարստը իր «Wörterbuch des Mittelarmenischen» («Միջին հայերենի բառարան») աշխատության մեջ արաբական փոխառությունների թիվը հասցնում է 1100-ի⁶։ Միջին հայերենի երկհատորյա բառարանում (Ռ.Ղազարյան, Գ.Ավետիսյան, այսուհետև ՄԳԲ) ներկայացված են 1436 արաբական փոխառություններ՝ չհաշված փոխառությունների բազմաթիվ տարբերակներն ու գրչական ձևերը⁷։ Այս փոխառությունները միջին հայերենի բառապաշարին են անցել զրավոր և բանավոր ճանապարհով։ Ըստ այդմ էլ արաբական փոխառությունները բաժանվում են երկու խմբի՝ ժողովրդական և գրական փոխառությունների։ Ըստ Մ.Սուրադյանի՝ միջին հայերենի բառապաշարին անցած արաբական փոխառությունների կեսից ավելին գրական փոխառություններ են։ Հիմք ընդունելով Յ.Կարստի բերած թվաքանակը՝ Մ.Սուրադյանը դրանցից 500-ն է համարում ժողովրդական փոխառություններ։ Իսկ Ռ.Ղազարյանը, արդեն ՄԳԲ-ի տվյալներից ելնելով, արաբերենից փոխառված բառերի մեծ մասը համարում է ժողովրդական բնույթի փոխառություններ, որոնք միջին գրական հայերենին են անցել ուղղակի ճանապարհով՝ ժողովրդախոսակցական լեզվից։

Լինելով բժշկագիտական աշխատություն՝ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գրքում, ինչպես քիչ հետո կտեսնենք, գերակշռում են գրական փոխառությունները։ Սակայն քիչ չեն նաև ժողովրդական բնույթի փոխառությունները։ Մ.Սուրադյանն իրավացիորեն նշում է, որ գրական միջին հայերենի ժողովրդական բնույթի արաբական փոխառությունների աղբյուրը խոսակցական միջին հայերենն է⁸, այսինքն՝ դրանք արաբերենից բանավոր ճանապարհով անցել են միջին հայերենի խոսակցական տարբերակներին, այնտեղից էլ՝ գրական լեզվին։ Այդ փոխառություններն ավելի լայն գործածություն են ունեցել, քան գրական փոխառությունները, հանդես են եկել բառակազմական տարբեր ձևերով, և դրանց մի մասը մինչև օրս էլ կենսունակ է հայերենի մի շարք բարբառներում։

Եթե բանավոր ճանապարհով կատարված փոխառությունների հետևանքով լեզու են մուտք գործում հիմնական բառաֆոնդին պատկանող առօրյակենցադային բառեր, ապա գրական փոխառությունները լեզուն հարստացնում են գիտական նշանակություն ունեցող բառերով ու արտահայտություններով։ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ գործածված արաբական փոխառությունների մեծագույն մասը գրական փոխառություն է եվ դա

⁵ Տե՛ս Դրաշյա Աճառյան, նշվ. աշխ., էջ 213։

⁶ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հատոր Ա, եր., 1972, էջ 199։

⁷ Տե՛ս Ռուբեն Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, եր. 2001, էջ 91-92։

⁸ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հատոր Ա, եր., 1972, էջ 215։

միանգամայն բնական ու տրամաբանական երևույթ է, քանի որ, ինչպես ասվեց, արաբերենը ժամանակի գիտական լեզուն էր: Մինչև արաբական բժշկության տարածումը Հայաստանում բժշկագիտական գրականությունը շատ արքատիկ էր (հունարենից ընդամենը մի քանի աշխատություններ էին թարգմանվել հայերեն), ուստի արաբական բնագրերը թարգմանելիս լեզվական, հատկապես բառապաշարային տեսակետից հայերենը հեղինակներին լայն հնարավորություններ չէր տալիս: Ղրա համար էլ հայ հեղինակները մեծ քանակությամբ գիտաբաներ էին վերցնում արաբերենից: Թարգմանչի համար խիստ դժվար էր, եթե չասենք անհնարին, գտնել և գործածել արաբերեն հարյուրավոր գիտաբաների հայերեն ճշգրիտ համարժեքները, այն էլ այն դեպքում, երբ միջին դարերում հայերեն բժշկական տերմինաբանությունը նոր-նոր էր սկսում մշակվել:

Հետաքրքիր է նաև մեկ այլ իրողություն: Ամիրդովլաթ Ամասիացին երբեմն հայերենում արդեն գոյություն ունեցող բառերի փոխարեն կիրառում է արաբական փոխառությունները: Օրինակ՝ նա գործածում է աքո բառը⁹, մինչդեռ գրաբարյան բառաֆոնդն արդեն ուներ նրուր բառը: Այդպես էլ գործածում է այրասայ բառը՝ հիրիկ (97), բուխարը (49)՝ գոլորչի, գամխը (62)՝ խեժ, ըռահչան (12)՝ սարսուռ, դող, ըսթսխան (14)՝ այտոյց, լուֆան (98)՝ մանրագոր, խուսաթ ըլ սայլապը (100)՝ խղործ, հլթիսը (98)՝ քաղբան, ճուարիչը (7)՝ խյուս, յուլխը (97)՝ մոշենի, նամլան (70)՝ մրջյուն, տխնաֆասը (281)՝ շնչարգել բառերի փոխարեն: Այս երևույթը կարելի է բացատրել այն իրողությամբ, որ Ամասիացուն կարող էին անծանոթ լինել այդ բառերի գրաբարյան համարժեքները: Ի վերջո, ապրելով և իր բժշկական գործունեությունը ծավալելով օտար, հատկապես թուրքական միջավայրում՝ Ամասիացին կարող էր ծանոթ-չլինել գրաբարյան ամբողջ բառազանծին:

Մյուս կողմից էլ, ժամանակի թելադրանքով յուրաքանչյուր ընթերցող, լինել դա բժիշկ թե բժշկությամբ պարզապես հետաքրքրվող մեկը, պետք է քաջ ծանոթ լինել արաբերեն տերմինաբանությանը (այնպես, ինչպես այսօր նույնը պահանջվում է լատիներեն տերմինաբանության համար): Քանի որ հենց արաբերենով էր ստեղծվում ժամանակի գիտական, հատկապես բժշկագիտական գրականությունը, ուստի Ամասիացին հաճախ նաև չի թարգմանում և չի բացատրում իր գործածած փոխառությունները:

Ղրոֆ. Ռ. Ղազարյանը «Միջին գրական հայերենի բառապաշարը» աշխատության մեջ արաբական փոխառությունների 28 իմաստային խմբեր է նշում¹⁰: Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ գործած-

⁹ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Եր., 1940, էջ 36: Մյուսևետև փակագծերում կնշվի միայն էջը:

¹⁰ Տե՛ս Ռուբեն Ղազարյան, նշվ. աշխ., էջ 100-112:

ված արաբերեն գիտական փոխառությունները կարելի է դասակարգել հետևյալ իմաստային խմբերում.

1. **Բուսանուններ**¹¹. այս խմբի մեջ են մտնում նաև մի շարք պտուղների, սերմերի, բույսերի, ծաղիկների, տերևների, արմատների անվանումները: Բուսանուններն ամենամեծ իմաստային խումբն են կազմում «Օգուտ բժշկութեան» երկում, քանի որ անհնարին էր, որ յուրաքանչյուր բույսի անվանման համար այդ ժամանակի գրական հայերենը սեփական բառ ունենար ստեղծած, կամ Ամասիացին ինքը ստեղծեր (չնայած, ինչպես հետագայում կտեսնենք, Ամասիացին բավականին հաճախ թարգմանում է արաբերեն բառը՝ կամ՝ նրա փոխարեն գործածելով արդեն եղած հայերեն տարբերակը, կամ՝ ինքը ստեղծելով նոր բառ, կամ՝ ներկայացնելով բուսանունների՝ արաբերենից կատարած բառապատճենումներ): «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ արաբերենից փոխառված բուսանունների ընդհանուր թիվը 99-ն է՝ չհաշված գրչագրական ձևերը: Դրանցից են. ախսաւան (97)-aqhavān (երիցուկ), իսխիլ (97)-esgal (չուշանազգիների ընտանիքին պատկանող բույս՝ մկնասոխ), լիսան ըլ համալ (99)-lisan ծի hamal (եզան լեզու) ≈ լիսան ըլ սավր (100)-lisan ծի savir, հապլըղար (229)-habb-ul- gar' (ղղմի սերմ) ≈ հապլըղար (159), մուղաս (100)-musgas (վայրի նռնենու արմատ):

2. **Բժշկական բառանուններ**. այս խմբի մեջ են մտնում տարբեր հիվանդություններ նշանակող բառերը, ինչպես նաև կազմախոսության, դեղագործության բնագավառներին առնչվող անվանումները: Բժշկական բառանունների ընդհանուր թիվը 113 է, որոնցից 59-ը հիվանդությունների անվանումներ են, 30-ը՝ կազմախոսության, իսկ 24-ը՝ դեղագործության բնագավառներին առնչվող բառեր: ա) **Հիվանդություններ**. ըրամատ (98)-ramad (կոպաբորբ), շահվաթի քալպին (305)-šahuat ծի kalbi (չնաքաղց, գայլի նախորժակ), վաճայուլ մաֆասիլ (440)-vaja' ul-mafasel (հողացավ):

բ) **Կազմախոսություն**. ամայ այիտի դաղ (36)-amadatita (զալարաղի), անքապութի (38)-ankabuti (ակնազնդի ներքին պատյանը), միայխսնայ շարիայիայ (36)-ma'li isnay a'sari (տասներկու մատնյա աղիք)

գ) **Դեղագործություն**. մուհալիլ (428)-mūhāllil' լուծող, հալող բառից (փարատիչ դեղամիջոց), մուֆառեհ (90)-mufarreh (կազդուրիչ դեղամիջոց)

տահմարթայ (409)-dahmarta (բաղադրյալ դեղամիջոց) ≈ տահմարթանայ (420):

¹¹ Ընդհանրապես, ամբողջ միջին հայերենի բառապաշարում արաբերեն փոխառված բառերից 320-ը, ըստ Մ.Սուրբադյանի հաշվումների, բուսանուններ են: Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հատոր Ա, էր., էջ 199:

3. Գիտության այլ բնագավառներին պատկանող բառեր (թվով 11), որոնցից. ա) Աստղագիտական (ընդամենը 3), Մառեխ (27)-mirrix (Հրատ (Մարս) մոլորակ), Մուշթարի (27)-muštari (Լուսնբազ (Յուպիտեր) մոլորակ), Օտարիտ (27)-'utarid (Փայլածու (Մերկուրի) մոլորակ):

բ) Քիմիական (թվով 8), գաճ (98)-zāj (պղնձարջասպ) = ըգաճ (98), դալխատար (461)-qalqutar (երկաթի օքսիդ) = դալդանտար (98), մուռի սաֆի (387)-murr և safi մաքուր բառերից (գմուռս):

4. Կենդանիներ (ընդամենը 2 բառ)՝ նանլայի (70)-namla (մրջյուն), ֆար ըլ տիպ (409)-f'ar ժլ dub (արջամուկ):

Արաբական գրական փոխառությունների մի մասը հայ բժշկագիտական գրականության մեջ գործածվում էր դեռևս 12-րդ դարից սկսած, իսկ մի մասն էլ առաջին անգամ կիրառվել է հենց Ամասիացու աշխատություններում: Դա, իհարկե, պայմանավորված էր Ամասիացու աշխատությունների բովանդակությամբ և լայն ընդգրկունությամբ: Մի շարք հիվանդություններ առաջին անգամ ներկայացված են հենց «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ, հետևաբար դրանց հետ կապված կազմախոսական, բժշկական գիտաբառերի ու բուսանունների գործածության առաջին աղբյուրը հենց «Օգուտ բժշկութեանն» է: Դրանցից են՝ ազան ըլ ֆար (98)-անմոռուկ, ամայ այիտի դաղ (36)-գալարաղի, անքապութի (38)-ակնագնդի ներքին պատյան, ասրունչ (112)-սուսր, աքիլայ (369)-փտախտ, գիպլ համամ (385)-կկվածաղիկ, ըռամատ (98)-կոպարորբ, ըռատպայ (100)-առվույտ, ըռուպու (13)-ասթմա, խուսաթ ըլ սայլապ (100)-խոլորձ, հարֆ (97)-կոտեմ, ղուվաթի մուսավիրայ (26)-սաղմի կերպավորում, միայ (98)-անուշահոտ խեժ, յազայի ըռայիսայ (30)-գլխավոր օրգաններ, նամաշ (450)-պեպեն, շրնախ (191)-կոպերի ծանրանալը, պասպասայ (97)-հնդկընկույզի կեղև, սահճ (354)-աղիքների խիթ, վարամի ռախվայ (476)-անոթային ուռուցք և այլն:

«Օգուտ բժշկութեան» երկում գործածված արաբական գրական փոխառությունների մի մասը՝ մի շարք բուսանուններ, ախտանուններ, դեղագործական բառեր, ժամանակի ժողովրդական լեզվում լայն կիրառություն ունեին: Սակայն այդ փոխառությունների մեծ մասը լայն գործածություն չունեցող բառեր էին. դրանք ընդհանուր կիրառական արժեք ձեռք չբերեցին և պահպանվեցին միայն գրավոր աղբյուրներում՝ իբրև նեղ մասնագիտական բառեր:

Ինչպես նկատել է Հր.Աճառյանը, արաբական փոխառությունների մեծ մասը զուտ տառադարձություն էր և չնտավ հայերենի ո՛չ գրական, ո՛չ ժողովրդախոսակցական լեզվի մեջ¹²: Չնայած 12-րդ դարից ընդհուպ մինչև 18-

¹² Տե՛ս Հրաչյա Աճառյան, Հայոց լեզվի պատմություն. II մաս, Եր., 1951, էջ 185:

րդ դարը արաբերենը մնաց որպես գիտական լեզու, հետևաբար և արաբական փոխառությունները՝ լիովին գործածելի և ընդունելի հայերենում, այնդամենայնիվ հայերենն այդ փոխառությունների մեծագույն մասը հետագայում մոռացության մատնեց՝ իր գրական լեզվում պահելով խիստ սահմանափակ թվով բառեր: Ընդհանրապես, ըստ Յր.Աճառյանի հաշվումների՝ արաբերենից հայերենին անցած թե՛ գրական, թե՛ ժողովրդական փոխառությունների ընդհանուր թիվը հիսուներեք է¹³, իսկ Ս.Սուրադյանի հաշվումներով այդ թիվը չի գերազանցում երեքուկես տասնյակը¹⁴: Մնացած բառերը, մրցման մեջ մտնելով հայերենում արդեն գոյություն ունեցող լեզվական համարժեքների կամ մեկ այլ լեզվից կատարված փոխառությունների հետ, աստիճանաբար ջնջվեցին, վերացան: Յր.Աճառյանը բառերի ստեղծման պատմության մասին խոսելիս գրում է, որ որևէ պայմանական նշան պարտավոր է համապատասխանել չորս կարևոր չափանիշի. 1. Պիտի լինի ըստ կարելվույն հեշտ գործադրելի: 2. Ըստ կարելվույն հեշտ ըմբռնելի: 3. Տարբեր ուրիշ պայմանական նշաններից: 4. Պայմանավորյալ կողմերի համար ընդհանուր¹⁵:

Եթե հաշվի առնենք այս չորս կարևոր նախապայմաններից զոնե առաջին երկուսը, ապա պարզ է դառնում, որ արաբական գրական փոխառությունները (հատկապես բառակապակցությամբ արտահայտվածները, որոնց թիվը խիստ մեծ է «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ) չեն բավարարում այդ պայմանները, քանի որ դրանք հայերենի հնչյունական կազմի համեմատությամբ բավականին երկարաշունչ են և դժվար արտասանելի:

Այսպիսով՝ արաբական փոխառությունների մեծագույն մասը հայերենի կողմից համարվեց խորթ, անհարազատ և մոռացության մատնվեց: Իր մշակման ու կատարելագործման ընթացքում հայոց լեզուն դրանք փոխարինեց կա՛մ հայերեն գրական համարժեքներով, կա՛մ այլ փոխառություններով:

Арабские заимствования в произведении Амирдовлата Амасиани "Полезьа медицины". - Статья посвящена исследованию арабских литературных заимствований в произведении знаменитого врача 15-го века Амирдовлата Амасиани "Полезьа медицины". В статье представлена история заимствований арабских медицинских терминов, которые вошли в армянский язык вследствие развития арабской медицины и армяно-арабских тесных языковых фрикций, а также освещены семантически-функциональные группы этих заимствований. Исследуя несколько научных, культурных и психологических факторов представлен дальнейшее употребление арабских литературных заимствований.

¹³ Տե՛ս Յրաչյա Աճառյան, նշվ. աշխ., էջ 213-214:

¹⁴ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմություն», հատոր Ա, Եր., 1972, էջ 224:

¹⁵ Յրաչյա Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Եր., 2005, էջ 121: